ՀՀ Արարատի և Վայոց Ձորի մարզերի
ընդհանուր իրավասության դատարանին

Բողոքաբեր՝
թիվ 91153414 քրեական գործով
տուժողի իրավահաջորդ Մուրադ Խաչատրյանի
ներկայացուցիչ Արթուր Ալբերտի Սաքունց
հասցե՝ Լոռու մարզ, ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 59

Վարույթն իրականացրած մարմին՝
ՀՀ քննչական կոմիտեի ԶՔԳՎ
8-րդ կայազորային քննչական բաժին
հասցե՝ Վայոց Ձորի մարզ, ք. Եղեգնաձոր, Թամանցիների փողց, 45/1

ԲՈՂՈՔ

(ՀՀ քննչական կոմիտեի ԶՔԳՎ 8-րդ կայազորային քննչական բաժնի պետի տեղակալ Լ. Եղոյանի՝ թիվ 91153414 քրեական գործով վարույթը կարճելու մասին որոշման դեմ)

ՀՀ զինվորական կենտրոնական դատախազության Եղեգնաձորի կայազորի զինվորական դատախազի տեղակալ Ա. Հարությունյանը, քննարկելով նույն քրեական գործով տուժողի իրավահաջորդի ներկայացուցիչ Ա. Սաքունցի կողմից քրեական գործով վարույթը կարճելու մասին որոշումը վերացնելու խնդրանքով ներկայացված բողոքը, 2015 թվականի հուլիսի 20-ին կայացրել է բողոքը մերժելու մասին որոշում:

1. Դեպքի նկարագրություն

Գրիշա Մուրադի Խաչատրյանը, ծնված՝ 1994 թվականի դեկտեմբերի 26-ին, 2013 թվականի ամառային զորակոչին զորակոչվել է ՀՀ զինված ուժեր և ծառայության անցել ՀՀ ՊՆ թիվ 58831 զորամասում:

Գ. Խաչատրյանը ՀՀ ՊՆ 58831 զորամասի 3-րդ գումարտակի 7-րդ վաշտի թվով 11 պարտադիր ժամկետային զինծառայողների հետ 2014 թվականի հունիսի 9-ից մինչև 20-ը նշանակվել է մարտական հերթապահության «19» մարտական հենակետում:

2014 թվականի հունիսի 20-ին, ժամը 10:00-ի սահմաններում, Գ. Խաչատրյանը և մեկ այլ շարքային Մարտուն Հարությունյանը ստանձնել են դիտորդի պարտականությունները

«19» մարտական հենակետի համապատասխանաբար թիվ 6 և թիվ 7 խրամաբջիջներում՝ հերթափոխն ընդունելով համածառայակիցներ Արսեն Ավոյանից և Սուրեն Մինասյանից:

Գ. Խաչատրյանը 2014 թվականի հունիսի 20-ին՝ ժամը 10:35-ի սահմաններում ՀՀ ՊՆ 58831 զորամասի թիվ «19» մարտական հենակետի 6-րդ դիտակետում գլխի աջ մասից կրակահերթով արձակված վնասվածներից մահացել է, որի վերաբերյալ հեռախոսագիր է տրվել ՀՀ ՊՆ ՔԾ 8-րդ կայազորային քննչական բաժին:

2. Գործի դատավարական նախապատմությունը

Դեպքի առթիվ 2014 թվականի հունիսի 20-ին ՀՀ ՊՆ ՔԾ 8-րդ կայազորային քննչական բաժնում հարուցվել է թիվ 91153414 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության հատկանիշներով:

Հարուցված քրեական գործի շրջանակներում Գ. Խաչատրյանը ճանաչվել է տուժող:

2014 թվականի հունիսի 24-ի որոշմամբ Գ. Խաչատրյանի հայրը՝ Մուրադ Խաչատրյանը, գործով ներգրավվել է որպես տուժողի իրավահաջորդ: Հետագայում Արթուր Սաքունցը, Արայիկ Զալյանը, Անի Չատինյանը և Տաթևիկ Սիրադեղյանը թիվ 91153414 քրեական գործով ներգրավվել են որպես տուժողի իրավահաջորդ Մ. Խաչատրյանի ներկայացուցիչներ:

2014 թվականի նոյեմբերի 20-ին կայացվել է թիվ 91153414 քրեական գործից մաս անջատելու և առաձին վարույթում քննելու մասին որոշում, որով քրեական գործից անջատվել է Վարդան Առաքելի Կիրակոսյանի կողմից պաշտոնեական լիազորությունների սահմանն անցնելու մասը՝ առանձին նախաքննություն կատարելու համար:

2015 թվականի հունիսի 20-ին ՀՀ քննչական կոմիտեի ԶՔԳՎ 8-րդ կայազորային քննչական բաժնի պետի տեղակալ Լ. Եղոյանը, վերանայելով իր վարույթում քննվող թիվ 91153414 քրեական գործի նյութերը, կայացրել է քրեական գործով վարույթը կարճելու մասին որոշում՝ հանցակազմի բացակայության հիմքով[1]:

2015 թվականի հուլիսի 10-ին տուժողի իրավահաջորդ Ա. Սաքունցը դիմում-բողոք է ներկայացրել ՀՀ ՀՀ զինվորական դատախազության Եղեգնաձորի կայազորի զինվորական դատախազ Ս. Մանուշակյանին՝ ՀՀ քննչական կոմիտեի ԶՔԳՎ 8-րդ կայազորային քննչական բաժնի պետի տեղակալ Լ. Եղոյանի՝ թիվ 91153414 քրեական գործով վարույթը կարճելու մասին 2015 թվականի հունիս 20-ի որոշումը վերացնելու և գործը լրացուցիչ նախաքննության ուղարկելու պահանջով[2]:

2015 թվականի հուլիսի 20-ին ՀՀ զինվորական կենտրոնական դատախազության Եղեգնաձորի կայազորի զինվորական դատախազի տեղակալ Ա. Հարությունյանը, քննարկելով թիվ 91153414 քրեական գործով տուժողի իրավահաջորդի ներկայացուցիչ Ա. Սաքունցի կողմից ներկայացված բողոքը, կայացրել է այն մերժելու մասին որոշում[3]:

---

[1] Տես հավելված 1՝ քրեական գործով վարույթը կարճելու մասին 20.06.2015 թվականի որոշման պատճենը
[2] Տես հավելված 2՝ 10.07.2015 թվականի դիմում-բողոքի պատճենը
[3] Տես հավելված 3՝ 20.07.2015 թվականի բողոքը մերժելու մասին որոշման պատճենը

Սույն որոշումը տուժողի իրավահաջորդի ներկայացուցիչներն ստացել են փոստային առաքման ծառայության միջոցով՝ 2015 թվականի հուլիսի 24-ին[4]:

3.Բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Գտնում եմ, որ բողոքարկվող որոշումը հիմնավոր չէ, դրանով չեն բացահայտվել Գ. Խաչատրյանի մահվան հանգամանքները, ինչը հիմնավորվում է ստորև բերված պնդումներով:

Այսպես, ՀՀ Սահմանադրության 15-րդ հոդվածը սահմանում է, որ «Յուրաքանչյուր ոք ունի կյանքի իրավունք»:

Այս իրավունքն ամրագրված է Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի[5] 2-րդ հոդվածով: Սույն հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուրի կյանքի իրավունքը պաշտպանվում է օրենքով: Ոչ մեկին չի կարելի դիտավորությամբ զրկել կյանքից այլ կերպ, քան ի կատարումն դատարանի կայացրած դատավճռի՝ այն հանցագործության համար, որի կապակցությամբ օրենքով նախատեսված է այդ պատիժը»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Քրեական հետապնդում իրականացնող մարմինը պարտավոր է ձեռնարկել սույն օրենսգրքով նախատեսված բոլոր միջոցառումները՝ գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման համար, պարզել ինչպես կասկածյալի և մեղադրյալի մեղավորությունը հիմնավորող, այնպես էլ նրանց արդարացնող, ինչպես նաև նրանց պատասխանատվությունը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները»:

Կոնվենցիայի 2-րդ հոդվածի նպատակն է պաշտպանել անհատների կյանքի իրավունքը: Կոնվենցիայի 2-րդ հոդվածի 1-ին կետի դրույթը պարունակում է պոզիտիվ, նեգատիվ և դատավարական պարտականություններ: Նեգատիվ պարտականությունը պահանջում է, որպեսզի պետությունները ձեռնպահ մնան ապօրինաբար մարդու կյանքը խլելուց: Պոզիտիվ պարտականությունը նախատեսում է պահանջ, որի համաձայն պետությունները պետք է քայլեր ձեռնարկեն՝ ապահովելու իրենց ընդդատության տակ գտնվողների կյանքի պաշտպանությունը: Դատավարական պարտավորությունը, որը նույնպես կարող է նկարագրվել որպես պոզիտիվ պարտականություն, պարտավորեցնում է գործուն պաշտոնական հետաքննություն անցկացնել այն դեպքերում, երբ անհատը մահացել է պետության կողմից վերահսկվող կառույցում:

Կոնվենցիայի 2-րդ հոդվածի՝ արդյունավետ քննություն իրականացնելու պահանջի չափանիշներից է բավարար խստապահանջությամբ հետաքննություն անցկացնելը: Կյանքից զրկելու դեպքերի քննությունը պետք է իրականացվի այնպես, որպեսզի ապահովի մահվան հանգեցրած բոլոր հարցերի ու հանգամանքների լիարժեք բացահայտումը:

---

[4] Տես հավելված 4՝ փոստային ծրարի պատճենը

[5] Այսուհետ՝ կոնվենցիա

Գ. Խաչատրյանը դեպքի պահին գտնվել է պետության հսկողության ներքո գտնվող տարածքում, հետևաբար պետությունը կրում է արդյունավետ քննություն կատարելու պարտականություն, որը պետք է ապահովեր մահվան բոլոր հարցերի ու հանգամանքների բացահայտումը:

Թիվ 91153414 քրեական գործով վարույթը կարճելու մասին որոշման բովանդակությունը հիմք է տալիս եզրահանգելու, որ որոշ հարցեր դուրս են մնացել քննության շրջանակներից կամ չեն արժանացել պատշաճ գնահատականի:

Այսպես, նախաքննության ընթաքում քրեական գործը հարուցվել է ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասի («Սպանությունը՝ ապօրինաբար մեկ ուրիշին դիտավորությամբ կյանքից զրկելը») հատկանիշներով, սակայն նախաքննության ընթացքում քննարկվել են ինչպես սպանության, այնպես էլ ինքնասպանության և Գ. Խաչատրյանի կողմից զենքի հետ վարվելու կանոնները խախտելու վարկածները:

Նախաքննության ընթացքում ձեռք բերված հավաստի ապացույցների համակցությամբ հիմնավորվել է, որ որևէ անձի կողմից Գ. Խաչատրյանի նկատմամբ այնպիսի գործողություններ, որոնք կհասցնեին նրան ինքնասպանության կամ կհանդիսանային ինքնասպանության պատճառ, չեն եղել: Այս առնչությամբ նշանակվել է հետմահու դատահոգեբանական և դատահոգեբուժական համալիր փորձաքննություն, որի ընթացքում հանգամանալից վեր են լուծվել նախաքննությամբ ձեռք բերված տվյալները, Գ. Խաչատրյանի անձը, հոգեբանական և հոգեկան վիճակները, որի արդյունքում ինքնասպանություն գործելու հիմքեր չեն բացահայտվել: Այսինքն՝ նախաքննությամբ միանշանակ հերքվել է ինքնասպանություն գործելու վարկածը:

Ինչ վերաբերում է սպանության և զենքի հետ վարվելու կանոնները խախտելու վարկածներին, ապա ըստ բողոքարկվող որոշման բովանդակության, դրանց միջև չկա հստակ սահման, որը հնարավորություն կտա միանշանակորեն հաստատել, որ Գ. Խաչատրյանը խախտել է զենքի հետ վարվելու կանոնները, որն անզգուշությամբ հանգեցրել է նրա մահվան: Այսինքն՝ բողոքարկվող որոշմամբ հնարավոր չէ միանշանակ հետևություն կատարել, որ Գ. Խաչատրյանն ինքն իրեն է պատճառել հրազենային վնասվածքները:

Նախաքննության ընթացքում նշանակված դատաձգաբանական և դատաբժշկական համալիր փորձաքննությունների եզրակացություններով չի բացառվել Գ. Խաչատրյանի՝ ինքն իրեն կրակելու հանգամանքը: Մասնավորապես, 2014 թվականի դեկտեմբերի 19-ի թիվ 49761403 լրացուցիչ դատաձգաբանական և դատաբժշկական համալիր փորձաքննության եզրակացության հետևություններում տրվել է Գ. Խաչատրյանի կողմից ինքն իրեն կրակելու հավանական մեխանիզմը (ինչը մեզ համար հստակ չէ): Սակայն, այդ վարկածը միանշանակորեն չի հաստատվել նախաքննության ընթացքում ձեռք բերված այլ ապացույցներով: Բացի այդ, չի պարզվել, թե ինչ հանգամանքներում կարող էր զենքը դրված լինել «կրակահերթ» ռեժիմում, այն դեպքում երբ զենքն ունի ապահովիչ և փորձաքննություններով հիմնավորվել է զենքի՝ սարքին վիճակում գտնվելու հանգամանքը: Այսպիսով, հստակ է, որ նախաքննության ընթացքում ձեռք չեն բերվել

բավարար ապացույցներ, որոնք կփաստեն Գ. Խաչատրյանի արարքում զենքի հետ վարվելու կանոնները խախտելու հանցակազմի հատկանիշների առկայությունը:

Նախաքննության ընթացքում ամբողջությամբ չի հերքվել նաև մեկ այլ անձի կողմից Գ. Խաչատրյանին կյանքից զրկելու, այսինքն՝ սպանության վարկածը:

Այսպես, 2015 թվականի ապրիլի 8-ի լրացուցիչ դատաձգաբանական և դատաբժշկական համալիր փորձաքննության թիվ 03801503 եզրակացության հետևությունների 3-րդ և 4-րդ կետերում, պատասխանելով վարույթն իրականացնող մարմնի հարցերին, հետևություն է կատարվել, որ կրակող անձի մարմնի բաց մակերեսներին՝ ձեռքերին և դեմքին, առկա կրակոցի արգասիքները պահպանվում են մինչ կրակողի լվացվելը կամ այլ եղանակով նշված հետք կրող մակերեսների մաքրելը: Հետևություն է կատարվել նաև այն մասին, որ դեպքի վայր հանդիսացող խրամաբջջում վեց կրակոց կատարող անձի հագուստների վրա, կախված կրակողի և զենքի փոխադարձ դիրքից, չի բացառվում, որ կրակոցի արգասիքների մեջ մտնող անտիմոն մետաղ չհայտնաբերվի: Ընդ որում, վերջին հետևությունը կատարվել է Մ. Հարությունյանի կողմից կրակոց կատարելու պարագայում:

Նույն եզրակացության 8.9.-րդ կետում փորձագետները հանգել են հետևության, որ խրամաբջջում հայտնաբերված NN8 և 12 փաթեթներում փաթեթավորված արյան հետքերի առաջացման այլ պարագայում (այսինքն, եթե չեն առաջացել Գ. Խաչատրյանի գլխի վրա նկարագրված մուտքի վնասվածքներից և տարածվել ուղղագիծ), Գ. Խաչատրյանի գլխի և հագուստների վրա առկա հրազենային վնասվածքները կարող էին առաջանալ ինչպես Գ. Խաչատրյանի, այնպես էլ այլ անձի (այդ թվում նաև Մ. Հարությունյանի) կողմից կատարված կրակոցների հետևանքով:

Այսպիսով, հիշյալ եզրակացությամբ միանշանակ չի հերքվել այլ անձի՝ Մ. Հարությունյանի կողմից Գ. Խաչատրյանին հրազենային վնասվածքները պատճառելու հանգամանքը:

Ինչ վերաբերում է բողոքարկվող որոշմամբ ներկայացված փորձագետներ Արամ Համբարձումյանի և Կարեն Համբարձումյանի ցուցմունքներով հայտնած տվյալներին, ապա վերջիններս նշել են, որ այլ անձի՝ Մ. Հարությունյանի կողմից կրակոցների կատարումը չի բացառվում, սակայն քիչ հավանական է, քանի որ այդ դեպքում նրա վրա **կառաջանան կրակոցի արգասիքներ, այդ թվում՝ անտիմոն մետաղացման հետքեր**: Վերջիններիս ցուցմունքներն այս առումով հակասում են փորձագիտական եզրակացությամբ կատարված հետևություններին, քանի որ ինչպես ներկայացվեց վերը, հետևությունների 3-րդ և 4-րդ կետերով չի բացառվել կրակոցի արգասիքների չհայտնաբերման հավանականությունը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 114-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ « Փորձագետը կարող է հարցաքննվել իր տված եզրակացության պարզաբանման կապակցությամբ», միաժամանակ սույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Փորձագետի հարցաքննության արձանագրությունը չի կարող փոխարինել փորձագետի եզրակացությանը»:

Այսպիսով, վերոգրյալ հիմնավորումները հիմք են տալիս եզրակացնելու, որ Գ. Խաչատրյանի մահվան փաստի առթիվ իրականացված նախաքննությունը արդյունավետ չի եղել, ձեռք բերված տվյալները միանշանակ հետևություն կատարելու հիմքեր չեն պարունակում, ինչի դեպքում չէր կարող կայացվել քրեական գործով վարույթը կարճելու մասին որոշում՝ հանցակազմի բացակայության հիմքով (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետ), քանզի հանցակազմի բոլոր հատկանիշների բացակայությունը միանշանակորեն չի հաստատվել: Հետևաբար, հիշյալ որոշումը խախտում է թիվ 91153414 քրեական գործով տուժող Գ. Խաչատրյանի իրավունքները և օրինական շահերը:

Հաշվի առնելով վերոգրյալը, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 278-րդ և 290-րդ հոդվածների դրույթներով,

Խնդրում եմ

Վերացնել թիվ 91153414 քրեական գործով տուժող Գրիշա Խաչատրյանի իրավունքների խախտումը և գործն ուղարկել լրացուցիչ նախաքննության:

5. Կից ներկայացվող փաստաթղթերի ցանկը

- Հավելված 1. քրեական գործով վարույթը կարճելու մասին 20.06.2015 թվականի որոշման պատճենը
- Հավելված 2. 10.07.2015 թվականի դիմում-բողոքի պատճենը,
- Հավելված 3. 20.07.2015 թվականի բողոքը մերժելու մասին որոշման պատճենը,
- Հավելված 4. փոտային ծրարի պատճենը,
- Հավելված 5. բողոքը վարույթն իրականցնող մարմնին ուղարկելը հավաստող անդորրագիրը:

Բողոքաբեր՝ տուժողի իրավահաջորդ
Մ. Խաչատրյանի ներկայացուցիչ
Ա. Սաքունց
24.08.2015թ.